ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№_____ «____»_____201___թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան

Ի կատարումն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 19.12.2017 թվականին կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/44 որոշումը՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.12.2017 թվականի ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության (կից ներկայացվում է) 1-ին կետով որոշեց դադարեցնել գնահատող հանձնաժողովի 13.11.2017 թվականի ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված «Ֆոտոն» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և սույն որոշումից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Միաժամանակ, նույն արձանագրության 2-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշեց armeps.am/epps համակարգով վերագնահատել մրցույթը, մերժել «Ֆոտոն» ՍՊ և «Դեագա» ՍՊ ընկերությունների հայտերը (հայտի ապահովումը հավասար չէ գնային առաջարկի 5 տոկոսին), ինչպես նաև մերժել «Նորք-7» և «Էլաամոդա» ՍՊ ընկերությունների համատեղ հայտը (խախտվել է Հրավերի I մասի 4-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված՝ կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակի վերաբերյալ պահանջը): Գնահատման հաշվետվության (Evaluation) բեռնումից հետո միայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Էրիզ» ՍՊ ընկերության մասով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-իդ ենթակետի համաձայն մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Առդիր՝ 1 թերթ:

Վ. ՆԻԿՈՅԱՆ

Կատ.՝ Գ.Զթրյան
Հեռ.՝ 011-514129

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

- Վայրը՝ *Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1) 224/2 սենյակ*
- Օրը՝ *20.12.2017թ.*
- Ժամը՝ *10:00*

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Մ.Հայրապետյան*

Հանձնաժողովի անդամներ՝ *Ք.Համբարձումյան*

Ռ.Կարապետյան

Մ.Նավասարդյան

Լ.Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Ա. Վարդանյան*

1. Բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման վերաբերյալ

(Մ.Հայրապետյան)

Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 19.12.2017 թվականին կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/44 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դադարեցնել 13.11.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված «Ֆոտոն» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և սույն որոշումից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց

(Մ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps.am/epps համակարգով վերագնահատել մրցույթը, մերժել «Ֆոտոն» ՍՊ և «Դեագա» ՍՊ ընկերությունների հայտերը (հայտի ապահովումը հավասար չէ գնային առաջարկի 5 տոկոսին), ինչպես նաև մերժել «Նորք-7» և «Էլաամոդա» ՍՊ ընկերությունների համատեղ հայտը (խախտվել է Հրավերի I մասի 4-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված՝ կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակի վերաբերյալ պահանջը): Գնահատման հաշվետվության (Evaluation) բեռնումից հետո միայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0